Ardshinbank

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2025 թվականի ապրիլի 29-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2025-4-2 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 132,709,916,000 (մեկ հարյուր երեսուներկու միլիարդ յոթ հարյուր ինը միլիոն ինը հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթից (հարկերի նվազեցումից հետո) 6,635,495,800 (վեց միլիարդ վեց հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով, որը կազմում է սույն կետում նշված գումարի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված՝ պահուստային ֆոնդի համալրումից հետո մնացած զուտ շահույթից և «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվին առկա միջոցներից (կուտակված շահույթ)՝

1) 138,240,615,200 (մեկ հարյուր երեսունութ միլիարդ երկու հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամից 137,545,600,000 (մեկ հարյուր երեսունյոթ միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ հասարակ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերին որպես շահութաբաժիններ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների:

Սույն ենթակետով սահմանված շահութաբաժինները բաշխել սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Վճարումներն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ Ֆինանսական դեպարտամենտի կողմից հաստատելուց հետո:

2) 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված «A» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 9^{1}.3. կետի 1-ին ենթակետի:

Սույն ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «A» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: